# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՁՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ձովաշեն
համայնք, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ
zovashen.kotayq@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԱՊԵՏ ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

N 27
*16 մարտ 2017թ.*

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջների կից ներկայացվում է Ձովաշեն համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ին կայացած երկրորդ արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 18 թերթ:

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. Փոստ zovashen1@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 7

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 17.02.2017 թվականի N 01/15.1/671-17 գրությունը՝ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

1.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 1 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
2.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 3 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 37-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6.Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈԳՋՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 8

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի << Զովաշեն համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին >> թիվ 1 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) Որոշման նախաբանում << 12 -րդ >> թիվը փոխարինել << 14-րդ >> թվով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈԳՋՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Համայնքի ղեկավար՝ ՍԵՌՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 9

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի << Զովաշեն համայնքի 2017 թվականի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի մասին >> թիվ 2 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) Որոշման նախաբանում << «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածը >> բառերը և թվերը փոխարինել << «Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը >> բառերով և թվերով :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՈՐԳՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 10

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի << Զովաշենի գյուղական համայնքի ղեկավարի 2016 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը>> թիվ 3 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) որոշման նախաբանում << 69-րդ հոդվածի 1-ին մասի >> բառերը և թվերը փոխարինել << 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի >> բառերով և թվերով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈԳՋՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 11-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի և << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի << Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին >> թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) Ավագանու որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի,

2) Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈԳՋՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

**Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Ջուլֆայի կամավորների ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 12-ի
N 37- Ն-ի որոշմամբ
փոփոխված 2017 թվականի
մարտի 10-ի 11-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջուլֆաշեն համայնքում 2017 թվականի համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքոչափերը

## Տեղական տուրքերի դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջուլֆաշեն համյանքում 2017 թվականի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնյոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանյոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանվեց հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝

բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տասը հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասհինգ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

## Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնքում 2017 թվականի համար սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հարյուր դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երկու հազար դրամ .

8 ) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Ս. ՄԱՏՍԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 12

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 24-ի << Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին >> թիվ 6 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը .

1) որոշման նախաբանում << 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի >> բառերը և թվերը փոխարինել << 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի >> բառերով և թվերով :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՅՈԳՉՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովաշեն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Զովաշեն, հեռ. (094)21-71-08, (094)21-71-05, էլ. փոստ zovashen1@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՄԱՐՏԻ 2017թվականի N 13-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և << Հայաստանի հանրապետության բյուջետային համակարգի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Զովաշեն համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԵՈՂՅԱՆ ՍՈՒՐԻԿ
2. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
4. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԷՎԵԼԻՆԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ

Համայնքի ղեկավար՝ ՍԵԴՐԱԿ ՍԱՖԱՐՅԱՆ